ԳԵՏԱԲԱԿԻ ՇՐՋԱՆ

103. ՁԱՐԵՔԱ ԱՆԱՊԱՏ

Գտնվում է Գետաբակից արևելահյուսիս (մոտ 6 կմ) Շամքոր գեսի ձախ ափին։ Բաղկացած է մի փոքր եկեղեցուց և գավթից, որոնք ղտնվում են պարսպափակ բակի մեջ, ուր կան սեղանատուն, բազմաթիվ խուցեր, տնտեսական այլ շենքեր և զանգակատուն։ Պարսպից դուրս մի փոքրիկ մատուռ կա, որը կոչվում է «Հարանց մատուռ»։

Այս վանքը մեկն է XVII դարի սկզբում կառուցված այն մշակութային կենտրոններից, որոնք ծնունդ առան աղդային վերելքի ծանր պայմաններում։ Թուրք-պարսկական պատերազմների ավերածությունների պակասը լրացրեց Շահ Աբասի բռնի գաղթեցումը։ Օրհասական այդ տարիներին հայ ժողովրդի հերոսական ինքնապաշտպանությունը բազմաթիվ անգամ վրկել է նրան վերջնական կորստից։ Ազգապահպանման գործում մեծ դեր խաղացին գիրն ու գրականությունը։ Սկսվեց մշակույթի զարգացման մի նոր վերելք, որի աչքի ընկնող գործիչներից էին Սյունիքում հիմնված «Հարանց անապատի» անձնուրաց կազմակերպիչներ Սարգիս և Կիրակոս վարդապետները, հետագայում՝ կաթողիկոս Մովսես Սյունեցին։ Այդ նշանավոր «Անապատի» ուսումնական սանները Հայաստանի տարբեր մասերում ստեղծեցին մշակութային բազմաթիվ նոր օջախներ։ Այդ սաներից էր նաև Դավիթ եպիսկոպոս Ղարամանենց Շամքորեցին, որը վերադարձավ իր գավառը և հիմնեց Զարեքա վանքը։ Նա հավաքեց բազմաթիվ ուսումնատենչ երիտասարդներ և իր վանքը դարձրեց մշակութային կարևոր կենտրոն։

Դավիթ Ղարամանենցը վախճանվեց 1643 թ. և թաղվեց իր շինած եկեղեցու պատի տակ (արձ. № 1038)։

1033. ԳԱՎԹԻ հարավային մուտքի վրա

Շնորհաւ ամենակալին Աստուծոյ կառուցաւ յանուն վրկչին վերնատունս, տեղի հոգւոյն նշմարտի եկեղեցիս սուրբ և գաւիթ գովելի. ի հայրապետութեան · · շինեցաւ ձեռամբ տեսուն Ներսիսի, հանդերձ :Հ: (70) եղբարց. ամէն, ի փրկութիւն հոգոց մերոց. որ ընթեռնուլ՝ յիշեցէք մեզ ի Քս. ամէն. թվ. :ՌՃԼԳ: (1684):

Ծանոթ. *Հրատարակիչների մոտ դգալի տարբերություններ կան։*

Հրատ. Բարխուդարեանց, 313։ Լալաեան, V, 337։ Ջալալեանց, I, 165։

1034. ԳԱՎԹԻ արևմտյան մուտքի վրա

Սուրբ խաչս բարեխաւս տէր Մովսէսին Ներսէսեանց, վասն վրկութեան հոգւոյ Բարիուտարին, որ բազում սիրով եռուն շինել զգաւիթ սուրբ եկեղեցւոյն։

Հրատ. Բարխուդարեանց, 314։ Լալաեան, V, 337—338։ Ջալալեանց, I, 165։

1035. ՉԱՆԳԱԿԱՏԱՆ *մուտքի բարավորի վրա՝*

Կամօքն Ա.յ. շինեցաւ զանգակատունս յանուն սրբոց նմեցակապեացն Միքայէլի եւ Գաբրիէլի. ի հայրապետութեան Պետրոսի արքազան կաթուղիկոսին ի ձանն Աղուանից եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս և անապատիս Չարեքայ Սարգիս վարդապետի. ձեռնտուութեամբ եւ աղօթիւք :Հ: (70) միաբանից. կատարումն եղեւ սբ. խորանիս ի փառս Ա.յ: Արդ, ես Քրիստոսի ծառայ Սարգիս վարդապետս եւ աղօթաւոր եղբարքս շինեցաք զսուրբ կաթուղիկէս ի փրկութիւն հոգւոց մերոց եւ ամենայն հեծեւողաց. որք ընթեռնուք յիշեցէք զմեզ ի Քս. թվ. :ՌՃ: եւ :Ը: (1659):

Հրատ. Բարխուդարեանց, 314։ Ջալալեանց, I, 164—165։ Լալաեան, V, 338։

1036. ՀԱՐԱՆՑ ՄԱՏՈՒՌԻ *վրա՝*

Ի թուին հայոց :ՌՃԺԶ: (1667) ի հայրապետութեան տեառն Պետրոսի կաթուղիկոսին, ես Քրիստոսի ծառայ Սարգիս վարդապետս կանգնեցի զխաչս ի լուսաւորութիւն հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց տէր Յաւանէսին, Եղիսաբէթին և միաբանիցս, որք աստ կան հանգուցեալ, և ամենայն ողորմածաց մերոց. Քրիստոս Աստուած մեր Լուսաւորեսցէ հոգւով և մարմնով աստ և յաւուրն դատաստանին. և որք ընթեռնուք յիշեցէք ի Քրիստոս զՄելքոն կազմաւղս:

Հրատ. Լալաեան, V, 238—239 (որից և առնում ենք)։ Բարխուդարեանց, 314 (վերջին տողերը չունի, բայց ունի թվականը, որը Լալայանցի մոտ չկա)։ Ջալալեանց, I, 166։

Ծանոթ. *Արձանագրությունը, դատելով բովանդակությունից, կարող է գրված լինել խաչքարի վրա։*

1037. ՊԱՐՍԴԻ ՄՈՒՏՔԻ ԳԼԽԻՆ՝

Ի թուին :ՌՃԿԶ: (1717). Ես Մկրտիչ վարդապետս շինեցի պարիսպս, որ եղև խարջ :ԻԸ: (28) թումանի. Ովանէս վարդապետն տուաւ :Ժ: (10) թումանի. շինեցաւ իշխանութեամբ սորա:

Հրատ. Բարխուդարեանց, 314։ Լալաեան, V, 338։ Ջալալեանց, I, 165—166։

1038. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ, *որը գտնվում է եկեղեցու արևելյան պատի մոտ.*

Այս է հանգիստ Դաւիթ եպիսկոպոսին. թուին :ՌՂԲ: (1643):

Հրատ. Լալաեան, V, 339։

1039. Սուրբ խաչս բարեխաւս է Դաւիթ եպիսկոպոսին հաւրն և ննջեցելոց. թվ. :ՌՀ: (1621)։

1040. Սուրբ խաչս բարեխաւս Մանուէլի. թվ. :ՌԿԶ: (1617):

1041. Սուրբ խաչս Պետրում բէկին, Մակաարին:

1042. Այս է տապան Դաւիթ վարդապետին, որ փոխեցաւ առ Քրիստոս. թվ. :ՌՄՀԵ: (1826):

1043. Տէր հասի զնեղութիւնս տէր Մովսէսի, Ներսէսի, Ոսէփանին և Պարխուդարի. ձեզ պահէ անփուտ աշխարհի: